



46. ԳԵԼԸ ՄՈՒԽՍԻ ԸԼՆԵԼՈՒ Ա ԷԹՈՒՄ

Մի գեղ, շունքի շատ էր պառավել, վե կացավ ու ճամփա ընկավ, որ Լթա Երուսաղեմ ու մուխսի ըլնի, դա: Գնաց, գնաց, շատն ու քիչը աստոծ գիտա: Ճամփին գիլին մի ոչխար ա պատահում:

— Բա՛րև, գեղ աղբեր,— ասեց ոչխարը:

— Ինձ մի ասի գեղ, ասա մուխսի,— սլատասխան տվեց գելը: Ըստեղից գնաց ու մի ձիու պատահեց:

— Բարո՛վ, գեղ աղբեր,— ասեց ձին:

— Ինձ մի՛ ասի գեղ, ասա մուխսի,— պատասխան տվեց գելը:

Մի քիչ էլ գնաց, պատահեց մի ջորու:

— Բարո՛վ, գեղ աղբեր,— ասեց ջորին:

— Ինձ մի՛ ասի գեղ, ասա մուխսի,— պատասխան տվեց գելը:

Գելը գնաց էսպես օխտը տարի ման էկավ ման ու էլի հեռ էկավ. հալբաթ որ էսքան վախտին նա մանանա էր ուտում:

Հետ գալիս ջորին պատահեց:

— Բա՛րև, մուխսի,— ասեց ջորին:

— Ինձ մի ասի մուխսի, ասա գեղ, թե չէ կուտեմ քեզ:

Ջորին ասեց.— Բաս թե էդպես ա, արի նալներիս մեխերը հանի, թե չէ ուտելիս բողազդ կխրվի ու կխեղդվես:

Ջորին ոտը բարձրացրեց ու գելը էկավ, որ նալի մեխերը հանի: Ջորին որ մի քացի տվեց, հետ-հետ գնաց, վեր ընկավ: Ջորին փախավ գնաց, իսկ գելը իր ճամփեն շարունակեց:

էկալ ձիուն պատահեց:

— Բա՛րև, մուխսի.— ասեց ձին:

— Ինձ մուխսի մի ասի, թե չէ կուտեմ քեզ,— պատասխան տվեց գելը:

Ձին ասեց.— Բաս թե որ էդպես ա, արի նստի վրիս, ես քեզ քիչ-քիչ ման ածեմ, հետո կեր:

Գելը նստեց ձիու վրեն, ձին տարավ սար քցեց, ձոր քցեց ու գետնովը տալով ինքը փախավ գնաց: Գելը գլխին վայ տալով էլի վեր կացավ ու գնաց: Ճամփին ոչխարը ռաստ էկավ:

— Բա՛րև, մուխսի աղբեր,— ասեց ոչխարը:

— Ինձ մուխսի մի ասի, թե չէ կուտեմ քեզ,— ասեց գելը:

Ոչխարը ասեց.— Լա՛վ, թե որ պտի ինձ ուտես, արի ես քեզ տանեմ սուրուի մեջ, էնտեղ դճա լավերը կան, քեզ հմար վեր կալ, տար:

Գելը լսեց ոչխարին ու գնաց սուրուի մեջ: Հենց որ շորանի շները տեհան, վրա հասան ու գիլին գզգեցին, թիքա-թիքա արին:

